

«ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿԱՐԳԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Նաիրա Գասպարյան, Մարիաննա Օհանյան
Երևանի պետական համալսարան

Հոդվածը նվիրված է գործառական ոճագիտություն առարկայի դասավանդման առանձնահատկություններին: Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել այն տարբերությունները, որոնք բխում են ԵՊՀ տարբեր բաժիններում (անգլիական բանասիրության, միջմշակութային հաղորդակցության անգլերենի, թարգմանության տեսություն և պրակտիկա) նշված գիտակարգի դասավանդման յուրահատկությունների: Կարևորվում են տեքստի լեզվատճական վերլուծության բնագավառում ձեռք բերված տեսական գիտելիքը գործնականում կիրառելու որոշակի հմտությունները, նյութի վերլուծությունը լավագույնս ներկայացնելու համար ուսանողի տրամաբանված և ճիշտ հերթականությամբ քայլեր կատարելու կարողությունը:

Բանալի բառեր. գործառական ոճագիտություն, դասավանդման մեթոդներ, հմտությունների ձևավորում, ֆեյսբուք:

Ներածություն

Գործառական ոճերը առանձնանում են և տարբերվում լեզվական միջոցների գիտակցական նպատակային ընտրության հիմքի վրա՝ հիմք, որը սովյալ գործառական ոճի համար բնութագրիչ առանձնահատկություն է (Винокур 1939; Кожина 1968; Будагов 1967): Գործառական ոճերի վերաբերյալ ներկայումս գոյություն ունի հսկայական քանակությամբ լեզվաբանական գրականություն, որտեղ այդ ոճերը հիմնականում դիտարկվում են իբրև կայուն համակարգեր, որոնք ունակ են կառավարել լեզվական միջոցների ընտրությունը իրենց կոնկրետ տեքստային դրսևորումներում: Այլ կերպ ասած՝ գործառական ոճ հասկացությունը ներկայանում է իբրև լեզվական միջոցների փոխպայմանավորված համակարգ՝ ուղղված որոշակի հաղորդակցական նպատակների իրագործման (Гальперин 1973; Чаковская 1990):

Շատ լեզվաբաններ փորձել են որոշակի առնչություններ սահմանել լեզվի գործառույթների և այս կամ այն հատկանշական ոլորտի միջև, որում գործածվում է լեզուն: Եթե որոշ ոճագետներ (Վինոգրադով, Կոժինա) նշում են, որ ամեն մի գործառական ոճի հիմքում ընկած է լեզվի որևէ գործառույթ, ապա ուրիշները (Բյուլլեր) համոզված են, որ խոսքային հաղորդակցության բոլոր տեսակներում առկա են լեզվի երեք հիմնական գործառույթները՝ Darstellung

(ներկայացում - representation), Ausdruck (արտահայտում - expression), Appel (ուղերձ - appeal) (Чаковская 1977):

Բյուլլերյան այն դրույթը, որ ամեն մի խոսքային իրադրություն ենթադրում է երեք կողմ՝ հասցեագրող, հասցեատեր և ուղերձ, որի շնորհիվ տեղի է ունենում հաղորդակցում, հետագայում զարգացվեց Ռոման Յակոբսոնի կողմից: Նա բյուլլերյան տեսությունը հարստացրեց համատեքստի գաղափարով, որի սահմաններում տեղի է ունենում հաղորդակցումը, և, նշանային համակարգի գաղափարով՝ առանց որի հասցեագրողը և հասցեատերը չեն կարող ուղարկել և ստանալ ուղերձ: Այստեղ է, որ առաջ է գալիս հաղորդակցման գաղափարը, և, քանի որ ուղերձը կարող է ունենալ տարբեր ուղղվածություն, ըստ դրա էլ լեզվի գործառնություններից որևէ մեկը կարող է դառնալ գերիշխող: Այս հիմքի վրա Յակոբսոնն առանձնացնում է խոսքի 6 գործառնություն: Հենց այս տեսություններն են, որ հիմք հանդիսացան ռուս լեզվաբան ակադեմիկոս Վ. Վինոգրադովի համար՝ խոսքի գործառնությունների գաղափարը ուղղակիորեն կապելու գործառնական ոճերի գաղափարի հետ, հստակորեն ցույց տալու, որ խոսքի զանազան տեսակներում (խոսակցական ոճ, գիտական արձակի ոճ, պաշտոնական տեղեկատվության ոճ, գեղարվեստական ստեղծագործության ոճ) համապատասխանաբար գերակշռող են դառնում վերոհիշյալ երեք՝ հաղորդակցման, հաղորդման ներգործման գործառնություններից որևէ մեկը:

Ըստ Վ.Վ.Վինոգրադովի՝ գործառնական որևէ բնագավառի սահմաններում հասարակայնորեն գիտակցված հաղորդակցումը անպայմանորեն դրսևորվում է իբրև լեզվական միջոցների որոշակի, նպատակաուղղվածություն ունեցող համակարգ՝ այսինքն ամեն մի գրական ժանրում դրսևորվում է լեզվարտահայտչական միջոցների որոշակի համակարգ՝ համապատասխան սոցիալական այս կամ այն իրավիճակին՝ որոշակի հասցեագրողի և հասցեատիրոջ շփման պարագայում:

Տարբերակիչ լեզվարտահայտչական միջոցներին զուգահեռ լեզվաբանները նշում են, որ յուրաքանչյուր լեզվում գոյություն ունի չեզոք ոճական միջուկ, հնչյունային համակարգ, ընթերցանության կանոններ, որն առանց հատուկ երանգավորում ձեռք բերելու, առանց գնահատողական կամ զգացմունքային երևեջների գործում է հաղորդակցման ցանկացած ձևում:

Նման հանգամանքներում, եթե գեղարվեստական գրականության ընթերցողը՝ հասցեատերը, կախված իր անձնական ընկալման ունակությունից, ներաշխարհի հարստությունից, աշխարհայացքից, կարող է տեքստին տալ ուրույն մեկնաբանություն, ապա պաշտոնական, գիտական գրականության մեջ ընթերցողի անհատականությունը, խիստ աննշան դեր է խաղում, քանզի խորհրդավորության, երկիմաստության, բազմիմաստության ցանկացած միտում կամ դրսևորում այստեղ բացառվում է:

Հարկ է նշել, որ, լինելով հաղորդակցման և մտքերի արտահայտման համընդհանուր միջոց, լեզուն սերտորեն կապված է այնպիսի մտածողական պրոցեսների հետ, որոնք մեկնաբանության կարիք ունեն: Այս առումով գերմանացի փիլիսոփա և լեզվաբան Վիլհերմ Հումբոլդտի լեզվի ընկալման կոնցեպցիան արժանի է մեծ ուշադրության: Հումբոլդտը խոսքի հիմնական գործառույթ է համարում ընկալման գործառույթը: Ըստ նրա՝ լեզվի առկայությունը պայմանավորված է ոչ միայն արտաքին հաղորդակցման անհրաժեշտությամբ, այլև ներքին պահանջմունքով: Խոսքի գործառույթների գործունեությունը կապելով ընկալման և փոխընկալման հետ՝ նա համոզված նշում է, որ հաղորդակցման գործառույթից չէ, որ բխում են խոսքի գործառույթները: Այն, ինչ ցանկանում ենք հասկանալ թաքնված է ոչ թե բառիմաստի և քերականության հետևում, այլ բացահայտվում է դրանց միջոցով՝ նյութի դիալեկտիկական զարգացման շնորհիվ: Հենց ընկալման շնորհիվ է, որ լեզվական գործունեությունը դառնում է նպատակային:

1. Ըստ գոյություն ունեցող տեսակետի գիտական տեքստի բառապաշարը բաղկացած է երեք անհավասար մասերից.

ա) ընդհանուր գործածական բառեր, որոնք կազմում են լեզվի հիմնական բառապաշարը,

բ) եզրույթներ և եզրութաբանական բառակապակցություններ:

Իսկ երրորդ շերտը, որն ամենակարևորն է և ամենահետաքրքրականը, չի պարունակում ո՛չ ընդհանուր գործածական բառեր, ո՛չ էլ հատուկ եզրույթներ: Այս շերտը բնութագրվում է իբրև «ընդհանուր գիտական բառապաշար» և պարունակում է այն բառերը, որոնք ամենաբնական կերպով գործածվում են՝ հաղորդելու համար գիտական տեղեկատվություն՝ անկախ այն բանից տեղեկատվությունը խիստ գիտական է և առնչվում է ճշգրիտ կամ բնական գիտությունների հետ, թե կապված է հումանիտար գիտությունների բնագավառում կատարվող ձեռքբերումների, դիտարկումների կամ ընդհանրացումների հետ (Akhmanova, Idzelis 1978; Gasparyan, Knyazyan 2002): Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում բժշկագիտական տեքստը, որտեղ բառապաշարի շերտերի վերը նշված համամասնությունը խախտվում է՝ կախված այդ ոճի առանձնահատկություններից (Օհանյան 2014):

Գիտական խոսքի սահմաններում գործածվող անգլերենը որոշ առումով, պարունակում է սահմանափակ բառապաշար, և այդ պատճառով էլ անգլերենի այս տեսակը կոչվում է Restricted English (RE): Իրավացի է Ռ. Քվերկը, երբ պնդում է, թե՝ գիտության մասին խոսողը կարիք չունի գերազանց տիրապետելու լեզվին, սակայն լեզվին գերազանց չտիրապետել չի նշանակում եզրույթների սխալ արտասանություն: Որոշակի գրագիտություն և ընդհանուր մշակույթ պարտադիր կերպով անհրաժեշտ են, որպեսզի նա կրթված համար-

վի, քանի որ միայն կրթված գիտնականը, եթե նույնիսկ անգլերենը նրա մայրենի լեզուն չէ, կարող է ճիշտ տեղում դնել տրամաբանական շեշտը և խոսքը շարահյուսորեն ճիշտ կազմել, որքան էլ նա քաջատեղյակ չլինի անգլերեն լեզվի նրբություններին: Եվ միայն այս մակարդակի գիտնականն է, որ գիտե ինչպես ճիշտ օգտվել գիտական գրականության բառապաշարի շերտերից:

Լեզվի բառապաշարը, որտեղ մեծ է առկա մասնագիտական բառապաշարի դերը, լեզվական օրենքներին համապատասխան գտնվում է անընդհատ փոփոխությունների վիճակում, այդ պատճառով էլ նոր բառերի ստեղծման և կիրառման խնդիրը միշտ հետաքրքրել է լեզվաբաններին, հատկապես տնտեսության, քաղաքականության մեջ, մշակույթում մեծածավալ փոփոխությունների դարաշրջանում, որոնք ազդեցություն են թողնում բառարանի սրընթաց նորացման վրա՝ բոլոր հնարավոր նորակազմությունների հաշվին: Գիտական ոճը սովորական մարդու գիտակցության մեջ առաջին հերթին զուգորդվում է տերմինների հետ (Գասպարյան, Մուրադյան, Գասպարյան 2011): Գիտության սրընթաց զարգացմանը զուգահեռ աճում է հատուկ տերմինների քանակը, և գիտական ոճում հայտնվում են բազմաթիվ նոր գիտական հասկացություններ և տերմիններ, բազմաթիվ հին տերմիններ այս կամ այն փոփոխությունն են կրում: Քանի որ մասնագիտական բառապաշարը կազմում է բառարանի յուրահատուկ շերտը, այն ավելի կարիք ունի գիտակցական կարգավորման և կարգաբերման:

«Գործառական ոճագիտություն» առարկայի դասավանդման մեթոդները

Նշված առարկայի դասավանդման մեթոդաբանության հարցը հատկապես կարևորվում է, քանի որ գործող ծրագիրը չի նախատեսում սեմինար պարապմունքներ, իսկ դասախոսությունների ժամերը խիստ սահմանափակ են՝ մեկ կիսամյակ, շաբաթական մեկ անգամ: Ելնելով այս հանգամանքից, փորձ է արվել կիրառելու նոր մեթոդաբանություն, որի էությունը հետևյալն է. ընդհանուր տեսական հիմքերի քննությունից հետո, երբ քննարկվում են լեզվի և խոսքի գործառույթները, ուսանողներին հանձնարարվում է պատրաստել 3-4 էջանոց փոքրիկ զեկուցումներ գոյություն ունեցող տեսությունների վերաբերյալ, որոնք առնչվում են Վինոգրադովի (Виноградов 1955, 1981) Բյուլլերի, Մուկարժովսկու, Յակոբսոնի, Հալիդեյի, Քոփայի դասակարգումներին (Nuyts 1992): Քննարկվում են նաև ձևափոխության ենթարկված գործառույթները: Երբ սկսվում է դասախոսությունների երկրորդ խումբը՝ առանձին գործառական ոճերի քննությանն առնչվող, ապա դասախոսը ամեն դասի ուսանողներին տալով որոշակի գրականության ցանկ, հորդորում է, որ իրենք էլ պատրաստեն փոքրածավալ զեկուցումներ: Այս մեթոդի կիրառումը խրախուսելի է, քանի որ՝ նախ, ուսանողները ստեղծագործական մոտեցում են ցուցաբերում և

իրենք նույնպես գտնում են հետաքրքիր նոր հողվածներ և գրքեր խնդրո առարկայի վերաբերյալ: Այս մեթոդը դրական արդյունք է տալիս, որովհետև դասընթացի վերջում ուսանողին շատ քիչ բան է մնում անել քննությանը պատրաստվելու համար. նա արդեն բավականաչափ տիրապետում է թե՛ նյութին և թե՛ որոշակի կիրառական հմտությունների: Ուսանողների ակտիվ մասնակցությունը հնարավորություն է տալիս միավորներ հավաքելու և մեծապես նպաստում է գիտելիքի ձեռքբերմանը: Իսկ ամենակարևորն այն է, որ ուսանողին բացատրվում է, թե նա ինչպես կարող է այդ գիտակարգից ունեցած իր գիտելիքներն ու հմտություններն օգտագործել իր աշխատանքային գործունեության ընթացքում, հատկապես, եթե ուսանողը հակված է առնչվելու որևէ գործառական ոլորտի: Ամրապնդումը կատարվում է տեքստատեսակների մանրամասն վերլուծության միջոցով՝ կիրառելով հատկապես լեզվաոճական վերլուծության մեթոդը (Akhmanova, Idzelis 1974; 1978):

Մեթոդաբանությունը, տարբեր մեթոդների համակցված ու պաճառաբանված կիրառումը, ամենակարևորն է, որից անհրաժեշտ է հմտորեն օգտվել վերլուծություններ կատարելիս, քանի որ ուսանողը պետք է հասկանա ինչ է իրեն ուսուցանվում, ինչպես է ուսուցանվում, և ինչ է ինքը անում տարբեր գործառական ոճեր ներկայացնող տեքստերը լիարժեք ընկալելու համար: Տեսական դասընթացի դասավանդման ընթացքում հատկապես կարևորվում է կոնկրետ նյութի թեման, որն առանձնացվում է ամբողջական շարքից, տեսությունները, որոնք բացահայտվում են դասախոսության ընթացքում: Եթե խոսքը գնում է գիտական ոճի դասավանդման մասին, ապա պետք է ընդհանուր գաղափար տալ այդ ոճի ընդհանուր գործառական հատկանիշների մասին և ապա փորձել բացատրել ուսանողին ըստ իր նեղ մասնագիտական ուղղվածության, թե տվյալ գիտակարգի ուսումնասիրությունը ինչպիսի առանձնահատուկություններ ունի: Օրինակ՝ անգլերեն լեզու և գրականություն բաժնում անհրաժեշտ է գիտական գործառական ոճը ներկայացնել այլ ոճերի ընդհանուր համակարգում՝ հատկապես կանգ առնելով տեսական հարցերի վրա, միջնակության հաղորդակցության անգլերենի բաժնում առանձնահատուկ ուշադրության պետք է արժանացնել տեսական հարցերի քննարկումը՝ հիմնվելով գիտական և մշակութային առնչությունների վրա, մինչդեռ թարգմանության տեսության և պրակտիկայի բաժնում, տեսական քննարկումներին հանընթաց, պետք է զուգահեռներ տարվեն՝ սահմանելու մայրենի լեզվի հետ նմանություններն ու տարբերությունները, քանի որ թարգմանիչներն, անշուշտ, գործ են ունենալու տարբեր գործառական ոճեր ներկայացնող ոլորտների հետ: Հայտնի է, որ, հարմարվելով հասարակության պահանջներին, լեզուն կոչված է լավագույնս ծառայելու մարդկանց շփմանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Հետևաբար, ուսանողին պետք է մանրամասն

տեղեկացնել, որ շփման այս կամ այն ոլորտը ապահովվում է խոսքային միջոցների որոշակի լրակազմով:

Եթե անգլերեն լեզու և գրականություն բաժնի ուսանողի ուշադրությունը պետք է կենտրոնացնել տեսությունների բազմազանության, գիտական տեքստում իրացվող գործառնությունների ուղղվածության և առկա բառապաշարի շերտերի հարաբերակցության տեսական խնդիրների վրա, ապա միջմշակութային հաղորդակցության բաժնի ուսանողի համար ավելի էական նշանակություն կունենա, եթե նրան սովորեցվի այն նվազագույն գիտական բառապաշարը, որն անհրաժեշտ կլինի կիրառել միջմշակութային գիտական շփումներ իրականացնելիս: Ուսանողը պետք է նաև քաջածանոթ լինի, թե անգլերենի ստանդարտ տարբերակների համակարգի հետ ինչպես է առնչվում գիտական խոսքը, այսինքն՝ այն, որ գիտական անգլերենը մեկն է բազմաթիվ անգլերեններից, որ բրիտանացին, ամերիկացին, կանադացին, ավստրալացին, միգերիացին գիտության մասին խոսելիս օգտվում են միևնույն գիտական անգլերենից, չնայած որ գիտության մասին ոչ գիտական գրույցների ժամանակ նրանցից յուրաքանչյուրն օգտագործում է իր երկրում ընդունված անգլերենը՝ համեմելով այն գիտական բառապաշարով (Գասպարյան 2007; Օհանյան 2014):

Ինչ վերաբերում է թարգմանիչներին գիտական անգլերեն դասավանդելուն, ապա անհրաժեշտ է տեսականին զուգահեռ մանրամասնել նաև ժանրային տարբերակներին առնչվող խնդիրներ, քանի որ թարգմանելիս նրանք առնչվելու են հիմնականում ժանրային տարբերակներին: Ըստ էության, գիտական տեքստում բառապաշարի շերտերի քննարկման ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձվի այն հանգամանքին, թե ժանրային տարբերակներում այդ խնդիրը ինչպես է դրսևորվում: Գործնական առումով բոլոր խմբերում բաժանվում են տարբեր գործառնական ոճեր և ժանրային տարատեսակներ ներկայացնող տեքստահատվածներ, որոնք պետք է ենթարկվեն վերլուծության, վեր հանվեն իրացված գործառնությունը, սահմանվեն գործառնական ոճաժանրային հատկանիշները: Մինչև գործնական պարապմունքին անցնելը դասախոսը փորձում է լսարանին ներկայացնել վերլուծություն մեկ նյութի վերաբերյալ, իսկ այնուհետև ուսանողների խմբին ներգրավում երկրորդ նյութի խմբակային վերլուծության մեջ, որից հետո միայն վերահսկում է ուսանողների անհատական աշխատանքը:

Այժմ ներկայացնենք «Գործառնական ոճագիտություն» առարկայի առաջին միջանկյալ քննության թեստից վերցված մեկ հատված, հարցերի խումբ, որը վերաբերում է կոնկրետ գործառնական ոճ ներկայացնող խոսքահատվածի վերլուծությանը: Ուսանողին առաջարկվում է 4 հարց, որոնց պատասխանը հստակ վկայում է այն մասին, թե որքանով է սովորողը յուրացրել նյութը: Հար-

ցերի այս խումբը, որ պարտադիր է միջանկյալ քննությունը հանձնող բոլոր ուսանողների համար, ըստ էության, ամփոփում է նրանց տեսագործական գիտելիքների համադրումը, այսինքն, թե կոնկրետ դեպքում, անհատական տեքստեր վերլուծելիս ուսանողները ինչպես են կարողանում իրենց տեսական գիտելիքներին գործնական կիրառություն ապահովել: Քաջալերվում է այն հանգամանքը, որ ուսանողը կարող է ազատ ու անկաշկանդ շարադրել իր մտքերը՝ հստակ ձևակերպելով յուրաքանչյուր հարցի կոնկրետ պատասխանը: Ընդ որում, ուսանողներից շատերը իրացվող գործառնությունները նշելիս երբեք չեն բավարարվում դրանք միայն մեկ տեսության սահմաններում հիշատակելով, այլ մանրամասն քննարկում են նաև դրանց այլ առանձնահատկություններ այլ տեսություններում: Այս հանգամանքն էլ ստիպում է մտածել, որ շատ ավելի օգտակար է թեստային նման հարցադրումների միջոցով կատարել ստուգումը, քան ուսանողից պահանջել, որ նշված երեք կամ չորս տարբերակից ընտրի մեկ ճիշտը՝ ընդգծելով այն: Մանրամասն բացատրությունները թույլ են տալիս դասախոսին հասկանալ, թե որքանով է ուսանողը ընկալել նյութը: Կիրառելով տեսական գիտելիքը գործնականում, կրկնելով այն մի քանի տեքստի վերլուծության սահմանում՝ ուսանողը ձեռք է բերում որոշակի հմտություններ տեքստի լեզվաոճական վերլուծության բնագավառում, սովորում է տրամաբանված և ճիշտ հերթականությամբ քայլեր կատարել նյութի վերլուծությունը լավագույնս ներկայացնելու համար, իսկ նման մոտեցման դեպքում նա արդեն հրաշալի է սկսում տիրապետել նաև տեսական նյութին:

What functional domain does the passage belong to?

What speech functions are realized in it?

What stylistic markers are found in it?

Analyse the passage through the linguostylistic method of analysis to single out the linguistic units used on the semantic and metasemiotic levels.

Վերլուծության համար նախատեսված տեքստահատվածները ընտրվում են մոտավորապես յոթից տասն տողի սահմանում, ինչպես օրինակ հետևյալ հատվածը: Ստորև ներկայացնում ենք մեկ նմուշ միջանկյալ թեստի օրինակներից:

To whom it may concern.

With regard to your advertisement in the "Builders' Journal" of 3rd November, we would ask you to let us have a quotation for the new bathroom showers which are described. As building contractors we erect about a hundred houses and two or three blocks of flats a year. If your equipment is of good quality, and we receive a favorable offer, we may be able to place large orders with you. Our team is professional enough to cope with any problem.

We look forward to hearing from you soon.

Ընդ որում, անհատական աշխատանքի վերահսկման կիրառվող տարբերակ է մաս ֆեյսբուքյան համապատասխան էջի գործառնությունը, որտեղ ուսանողները կարող են բանավիճել, արտահայտել սեփական կարծիքը, ներկայացնել վերլուծությանն առնչվող նյութեր, գրքեր համացանցից: Ֆեյսբուքյան էջը գործառնական ռճագիտության առումով մեծ ու կարևոր կիրառական նշանակություն ունի, քանի որ էջը ուսանողը կարող է օգտագործել թե՛ հարցեր տալու, թե՛ ընկերների հետ մասնագիտական քննարկումների, և թե՛, որ ամենակարևորն է, գեկուցումների համար նյութեր և հոդվածներ ընտրել: Նա կարող է դրանց օգտագործման նպատակահարմարության առումով խորհրդակցել իր դասախոսի հետ, իսկ օգտակար նյութերը, դասախոսի հորդորով, կարող են օգտագործվել մաս խմբի մյուս ուսանողների կողմից: Այսպիսի դեպքերը օգտակար են մաս նրանով, որ ուսանողը ստիպված չէ ամեն նոր նյութի օգտակարությունը հասկանալու համար դրանք լսարան բերել թղթային տարբերակով կամ կրիչով, որը կարող է լրացուցիչ անհարմարություններ ստեղծել: Ֆեյսբուքյան էջի առկայությունը օգնում է ուսանողին մաս հետազայում, երբ արդեն վերջինս գիտակարգին առնչվող քննությունը հանձնելուց հետո կանգնում է որոշ հարցերի առջև՝ իր աշխատանքային գործունեության հետ կապված:

Եզրակացություն

Լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց, գործում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, իր տարբեր դրսևորումներով, ուստի և կարող է ունենալ կիրառական տարբեր գործառնություններ, որոնց հիման վրա էլ կատարվում է ոճերի դասակարգում: Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում «Գործառնական ռճագիտություն» գիտակարգը դասավանդվում է տարբեր մեթոդներով և մոտեցումներով՝ կախված լսարանի մասնագիտացումից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեկ այլ հետաքրքրական դեպք է արտոնագրի տեքստը, որտեղ մասնագիտական տերմինների շերտին զուգահեռ առկա է նաև արտոնագրային տերմինների բազմությունը (Գասպարյան 2007):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան, Ս.; Մուրադյան, Գ.: Գասպարյան, Ն. (2011) *Գործառնական լեզվագիտություն*. Երևան: ԵՊՀ հրատարակչություն:
2. Գասպարյան Ն.Հ. (2007) *Արտոնագրային մասնագրի լեզվաբանական առանձնահատկությունները*. Երևան: Լուսակն:
3. Օհանյան Մ. (2014) *Անգլերեն բժշկագիտական խոսքի լեզվաբանական առանձնահատկությունները*. Երևան: Լուսակն:
4. Akhmanova, O. (1972) *Linguostylistics. Theory and Method.* / Ed. by O. Akhmanova). M.: MGU.
5. Akhmanova, O.S., Idzelis R.F. (1978) *What's the English We Use?* M.: MGU.
6. Nuyts, Jan (1992) *Aspects of a Cognitive-Pragmatic Theory of Language.* // *On Cognition, Functionalism and Grammar.* Amsterdam/Philadelphia: John Benjamins.
7. Будагов, Р.А. (1967) *Литературные языки и литературные стили.* М.: Высшая школа.
8. Виноградов, В.В. (1955) *Итоги обсуждения вопросов стилистики.* // ВЯ N1, М.
9. Виноградов, В.В. (1981) *Проблемы русской стилистики.* М.: Просвещение.
10. Винокур, Г.О. (1939) *О некоторых явлениях словообразования в русской технической терминологии.* // Труды Московского института истории, философии и литературы. Т.5, М.
11. Гальперин, Н.Р. (1973) *О понятиях стиль и стилистика.* // Вопросы языкознания. N3, М., сс. 14-25.
12. Кожина, М.Н. (1968) *К основаниям функциональной стилистики.* Пермь: Пермский ун-т.
13. Чаковская, М.С. (1977) *Функция воздействия и функция сообщения как текстологическая проблема.* Автореф. канд. дис. М., МГУ.
14. Чаковская, М.С. (1990) *Взаимодействие стилей научной и художественной литературы.* М., МГУ.

On Some Aspects of Teaching Functional Stylistics

Functional Stylistics is a very important trend in style study. It deals with sets or paradigms of language units of all levels of language hierarchy, serving to accommodate the needs of certain typified communicative situations. Functional stylistics focuses on the message in its correlation with the communicative situation. The methods of teaching Functional Stylistics in different groups of students (English Philology Department, Department of English for Cross-Cultural Communication and Department of Theory and Method of Translation) differs on the basis of considering the specializations.

К вопросу преподавания функциональной стилистики

Функциональная стилистика является важной составляющей науки о культуре речи. Предметом функциональной стилистики являются средства языка с точки зрения их отбора и организации в речевое произведение в рамках того или иного функционального стиля. Функциональная стилистика изучает средства всех уровней языка: какие конкретные языковые единицы использует человек в момент речи и как происходит их отбор. Методы преподавания данной дисциплины различаются на разных кафедрах факультета романо-германской филологии в зависимости от специализации студентов.